

viarius ի, Plaisance ի անանունին Ուղեգրութիւններէն, որոնք, ինչպէս նաև Նեղոսն Ս. Կուսին անուամբ ծանօթ ասորական թարգմանութիւնները, կը հաստատեն թէ Ս. Կոյսը վախճանած է իր գերեզմանին մէջ. կ'ըսէին նաև թէ գերեզմանը կը բաղկանար երեք այրերէ, առաջինը շատ ընդարձակ, ուրկէ կը մտնէին միջին այրի մը մէջ, որ ունէր շատ փոքր սենեակ մը, որուն աւրեւեան կողմը կը գտնուէր կաւէ նստարան մը: Բայց Նեղոսն Ս. Կուսին հայերէնը չունի այդ մանրամասնութիւնները և որոշապէս կը գրէ թէ Ս. Կոյսը իր տանը մէջ վախճանեցաւ, և յետոյ կը յիշէ անոր թաղման և վերափոխման պարագաները: Հրնագոյն ուղեգիրները կը յայտնեն թէ այն տունը՝ ուր վախճանեցաւ Ս. Կոյսը, Ս. Սիոնն է. ան տեսակ մը կրօնական թանգարանի ձև առած էր: Մոսեստոսի և Սոփրոնիոսի օրով Ս. Կուսի նշման աւանդութիւնը աւելի ճոխացած է և անով աւելի հաստատուած է Երուսաղէմի աւանդութիւնը: Նոյն թուականներուն Սիոնի մէջ ցոյց կու տային ա՛յն վէմը՝ որուն վրայ տարածուած էր Ս. Կոյսը իր օրհասի պահուն. անոր կտորը խըշտեակն ալ հոն բերուած էր ուրիշ տեղէ, և է. գարուն արդէն Արգուլֆ եպս.ին զծած Սիոնի ընդարձակ եկեղեցիին յատկազիժը ցոյց կու տայ ա՛յն տեղը ուր Ս. Մարիամ վախճանած էր, և թէ նոյն եկեղեցիին իւրաքանչիւր անկիւնը նուիրագործուած էր ո՛ւրէ յիշատակով մը:

Գեթսեմանիի Ս. Կուսի այս եկեղեցին Պարսիկները կործանեցին երբ յարձակեցան Պաղեստինի վրայ է. դարու սկիզբը: Կէս դար Յետոյ, Արգուլֆ եպս.ի Ուղեգրական պատմութիւնը ցոյց կու տայ մեզ թէ եկեղեցին վերաշինուած է, և թանկագին տեղեկութիւններ կը հաղորդէ Ս. Կուսի Գերեզմանին և վերնայարկ տաճարին յօրինուածքի մասին: Ասորական հին Ժամանակագրութեան մը համաձայն, Մուավիէն խալիֆան, Երուսաղէմ այցելած ժամանակ, Գողգոթայի մէջ աղօթելէ յետոյ ուխտ ըրած է նաև Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցիին: Ապտիւլ Մէլիքը նպաստաւոր չի գտնուեցաւ: Երբ ան 690ին Մէքքէի տիրանալով իր զօրապետը՝ Էլհամաճ նորոգել սկսաւ Քեապէի նշանաւոր սրբավայրը, մտածեց անոր զրկել «Ս. Գեթսեմանիի սիւները», բայց Պաղեստինի երևելի երկու քրիստոնեայ պաշտօնեաներ համոզեցին Ապտիւլ Մէլիքը եւ խոստացան անոր զրկել Յուստինիանոս